



«... Ես Գրիգոր որդի Վասակա Միջկա չի- նեցի զԿառչկա կերանց» (Արցախ, էջ 323):

Հիւսիսային փոքր խորանին վրայ կայ՝ «ՈԿԵ. Ես Արրահամ Կանաչհոյեցի եւ ամուսին իմ միարանեցաք Սորանաչատու Աստուածածին, ետու զճախս խորանին եւ վարդապետն հաստատեաց ինձ Բ. Ժամ ի տաւնի սուրբ Գրիգորի անխափան» (Արցախ, էջ 323):

Սորանաչատի հետ սրտիւ կապուած է Յովհ. Վանականի անունը եւ նոյն իսկ երբեմն կոչուած է Վանականի վանք, վասն զի անիկա անոր հիմնադիրն ու զարգացնողն եղած է՝ «Եւ եղև վաղճան նորա (Վանականի) այսպիսի օրինակաւ ի վանսն, զոր իւր իսկ էր շինեալ, որ կոչի Սորանաչատ եւ վասն յորով եկեղեցեացն, որ ի նմա ընկալաւ գանուան... անէր նա շինուածս երեւելիս, գաւիթ շինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցոյն, զոր իւր իսկ շինեալ էր...» (Կիր. Գանձակեցի, Պատմ., էջ 198. Ալիշան, Հայրապատում, Բ., էջ 513. Տաշեան, Մայր Յուշ. Միտիթ., էջ 39 եւն):

Ինչպէս նախորդ արձանագրութիւններէն կը տեսնուի Յովհ. Վանական իր գեղեցիկ ձեռնարկին յաջողութեանը համար կ'ուենայ օգնական ձեռքեր ու սատարողներ:

Սորանաչատի հիմնարկէքն ու աւարտուածը մեծահանգէս կը կատարուի եւ այդ առիթներուն նուէրներ ստացուած են եւ փոխադարձ պարտականութիւններ դրուած:

1224ին՝ «Անէնի, կը վկայէ... միարանեցայ Սորանաչատոյ սուրբ Աստուածածինս... եւ ետու զճախս սուրբ Աւետարանին ստանալ զսա ինձ գաւակ հոգեւոր... շինող եւ առաջնորդ վանիցս Վանական վարդապետն հաստատեաց ինձ աւուր մահուան իմոյ Ա. քառասունք...» (Յովսէփեան, Սաղրակեանք, էջ 34. Թորոս Աղբար, էջ 272):

Ե՞րբ կառուցուեցաւ Սորանաչատի վանքը: Ջարլիանի համաձայն 1191ին (համտ. ճամբ., Ա., էջ 162): Ժամանակին անոր հիմնարկութեան թուականը ըսած էի «Կարելի պիտի ըլլայ... մերձաւորապէս 1215—1220 գնել» (համտ. իմ Յովհ. Վանական եւ իւր զպրոցը, Վիեննա 1922, էջ 11): Ամէն պարագայի 1223ին արդէն շինուած էր եւ Վանական վարդապետը իր աթոռը հոն հաստատած. ինչպէս հետեւեալ յիշատակագրութիւնը կը վկայէ՝ «Ի ՌՀԲ (1223) թուա-

կանին գրեցաւ առասպելախաւս տետրակս այս ի ձեռն Ստեփանոսի Աղթամարեցոյ ի վանքս Սորանաչատու ի դաւառս Գարդմանայ առ ոտս ուղիածեմ եւ աստուածարդիւնական վարդապետին Վանականի, որ փայլէ ի ժամանակին որպէս դասող առաւաւտու եւ ի կողմանց հիւսիսոյ նահանգիս Թորգոմա ամպ հոգեցաւը հանապաղ՝ հոսելով զաստուածախնսն եւ զբանաւորաց ոռոգանէ երկիր եւ թէպէտ կրտսեր էաք ի լսարան համահանդիսիս եւ անարուեստ դոյրով դժոյ գրոց, այլ յաւժարութեամբ սրտիս միայն յուսացեալ յԱստուած ի ձեռնային յաւուրս գրեցաւ, այլ աղաչեմ չլինել մեղադիր թիւրութեան, զի զհոյրմիւ ճրագով գրեցի եւ զայս միայն խնդրեմ յիշել զիս եւ զհայրն իմ տէր Սարգիս եւ զճնաւզսն իմ ըստ մարմնոյ եւ զեղբարսն իմ եւ զսիրելին իմ զԻգնատիոս քահանայ եւ...» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2101, Ժողովածու, համտ. Կարենեանց, Մայր Յուշ. հայ. Ջեռ. էջմ. 2050):

1223էն յառաջ Սորանաչատի հիմնարկութիւնը կը հաստատէ նաեւ Արրահամ Կանաչհոյեցիի արձանագրութիւնը, վասն զի ան ՈԿԵ թուին (այս է 1216ին) գրուած է: Բայց անոր հիմնարկութիւնը քանի մը տարի աւելի առաջ ալ կրնայ եղած ըլլալ, եթէ Աւելղատի արձանագրութիւնը Քաջիկեանի համեմատ փորուած ըլլայ ՈԿ. թուին, այս է՝ 1211ին (Արձագանք, 1888, էջ 87) եւ ոչ թէ Բարխուդարեանի համաձայն ՈԿԹին այս է 1220ին<sup>4</sup>: Վերջինիս ընթերցումն աւելի դեռադասելի կը թուի, քանի որ միւս արձանագրութիւններու մէջ ալ «թուին» չէ գրուած:

Յովհաննէս Վանական իր նորաշէն վանքին մէջ կը նուիրուի գրականութեան եւ ուսուցչութեան: Հաւանականօրէն հոն անոր կ'աշակերտին Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի, Մաղաքիա, Ստեփանոս, Յովսէփ, Սոսթենէս, Մարկոս, Գրիգորիս եւ Պօղոս: Սակայն քաղաքական աննպաստ պարագաներու հետեւանքով առժամայէս անկէ կը հեռանայ, բայց նորէն գալով՝ կը շարունակէ իր ազգօգուտ գործունէութիւնը: Ապա 1251ին կը մեռնի եւ «մօտ ի փոքրագոյն եկեղեցին» կը թաղուի (Կիր. Գանձ. Պատմ.,

<sup>4</sup> 1223ին Ստեփանոս Աղթամարցին Սորանաչատի մէջ Ջեռագիր մը կ'արտագրէ (Արարատ, 1902, էջ 967):

էջ 200 եւ Սիւրմէեան, Յուցակ հայ. Ջեռ. Հալէպի, Ա., էջ 311): Սորանաչատի առաջնորդութիւնը կը յանձնուի Պօղոս եւ Գրիգորիս վարդապետներու: Վերջինիս մասին կը խօսուի յետագայ յիշատակագրութեան մէջ՝

«Փառք... գրեցաւ... գիրքս այս (Ժողովածու) ի թուարքեր ամանակաց հայկազնեան ի Չ եւ ի Ա համարին, ի նեղ եւ ի դառն ժամանակին այսմիկ ի դարուս հետեւման եւ այս վասն մեղաց մերոց զի բազմացաւ անհարին վիշտք եւ նեղութիւնք ի վերայ ամենայն աշխարհի ի ձեռն անաւրէն եւ այլակերպ զաւրուսն Նետողաց, որով բազմացեալ են քան զամենայն աստեղս եւ քան զաւազ ծովու: զամենայն աստեղս եւ քան զաւազ ծովու: Իսկ գրեցաւ տառս Աստուածաշունչ ի վանս վարդապետի Վանականի ի Սորանաչատ կոչեցեալ ընդ հովանեաւ սրբոհոյ Աստուածանիս, որ է յոյս եւ բարեխաւս աշխարհի: Արդ ես Ստեփաննոս քահանայ սիրող եղեալ ես Ստեփաննոս քահանայ սիրող եղեալ րանին սպասաւորութեան վասն պատուիրանին Աստուծոյ... գրել ետու զհոգէհաս նացն Աստուծոյ... գրել ետու զհոգէհաս նացն... Արդ գրեցաւ երկակ բաներս առաքելական եւ մարգարէական ի տանս Աղուանից ի դաւառիս Երզնանք կոչեցեալ ի վանս Սորանաչատ սուրբ Աստուածածնիս. ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ պարոն Աղաւթային եւ որդոց իւրոց Վահրամ եւ Ջաբրէլ եւ Իւանէ եւ ի հայրապետութեան Տեառն եւ Իւանէ եւ ի հայրապետութեան Տեառն եւ Իւանէ (ի) Աղուանից կաթողիկոսի: Արդ ով ներսիս (ի) Աղուանից կաթողիկոսի: Որք աւտիք սուրբ մանկուն(ք) եկեղեցոյ... որք աւտիք եւ կամ աւրինակ առնոյք զլուսաւոր գիրքս կայս՝ յիշեցէք նախ եւ առաջին գլխաւոր գայս՝ յիշեցէք նախ եւ առաջին գլխաւոր լուսաւոր եւ բաշխիչ եղև ամենաառաջնորդացն Աստուծոյ, ընդ նմին եւ զձեռնաստեղծ Ստուծոյ, ընդ նմին եւ զարդապետն, որ սուսն գաւակ իւր գրիգորէս վարդապետն, որ այժմիկ յաջորդէ գաթոն վարդապետին իւրոյ լցեալ բանիս եւ գիտութեամբ Հոգւոյն սրբոյ, ընդ նմին եւ զՍտեփաննոս եւ զԿիրակոս քահանայք եւ զճնոզսն իւրեանց հանդերձ ամենայնք եւ զճնոզսն իւրեանց հանդերձ որ են նայն բարեկամաւք եւ ընկերակցաւք որ են զաւառաւ Բարբրեցի, ի գեղջէն, որ կոչի Սորս եւ սնեալ ի հոշակաւոր ուխտն որ կոչի Տաբաւեցիք, որ կան առ ոտս եկեղեցոյն Ամենափրկիչ կոչեցեալ եւ սուրբ Աստուածածնին Մարիամու: Եւ ի վերայ այսր ամենայնի զանարժան եւ գոտտապեալ գրելնս նայնի զանարժան եւ գոտտապեալ գրելնս գրիգոր եւ զճնոզսն իմ...: Արդ գրեցաւ գիրքս Ստեփաննոսի գրոց աշակերտի գաւառաւ Բարբրեցի, զեղջաւ ի վանացն

Տաբաւեցի: Արդ... աստաջիք թէ Գրիստոս... ողորմեայ Ստեփաննոսի եւ հաւրն իմ Հայրապետ քահանայի եւ մաւրն իմ Թեկղ կոչեցեալ եւ եղբաւրն իմ Կիրակոս քահանայի եւ միւս եղբաւրն Արրահամ...» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ջեռ. էջմ. 2273):

Գուցէ Պօղոսի եւ Գրիգորիս յաջորդն ըլլայ՝ Պետրոս վարդապետը, որուն օրով Նարեկ մը կը գրուի՝

«Ի ՉԼԲ (1283) թվիս գրեցաւ գիրքս Գրիգորի Նարեկացի... ի վանս Վանական վարդապետի առաջ (նորդ գո) լով Պետրոս վարդապետի... ձեռամբ Մարտիրոսի բազմամեղ ծառայի ի ծերութեան ժամանակի» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 1563, համտ. եւ Յովսէփեան, Քարտեզ հայ հնագրութեան, Վաղարշապատ 1913, էջ 39):

Ասկէ վերջը դարերով Սորանաչատի շուրջը լուծիւն կը տիրէ, սակայն անիկա ժամանակին յորձանքին դէմ ողորելով իր գոյութիւնը պահած է եւ զարգանալով նոյն իսկ եպիսկոպոսանիստ եղած: Ժէ. դարէն ունինք հետեւեալ յիշատակագրութիւնները:

«Արդ գրեցաւ սաղմոսարանս եւ գիրքս ժամատեղաց ձեռամբ Եսայի գրչի... ի յաթոս Սորանաչատի եւ Վանական վարդապետի ի հայրապետութիւն տէր Յոհան արպետի ի հայրապետութիւն ՌՀԻ...» (Սարգիսեան, Մայր Յուցակ, Ա., էջ 288):

Այս յիշատակարանին «ՌՀԻ թուականը (ՌՀԻ) սրբագրուած է, որ սակայն սխալ է, վասն զի Ջեռագիրը ոչ թէ Աղուանից Յովհաննէս Զ. կաթ. ի օրով գրուած է, այլ Յովհաննէս Թ. ի ժամանակ եւ Եսայի զեռ ուրիշ յիշատակագրութիւններ ունի այս վերջին շրջանէն<sup>5</sup>: Յամի հազար եւ ՉԼ երրորդի (1639) թուականութեանս Հայոց գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ: Եւ արդ ես անպտուղս ի բարեաց. մեղաւորս յարգարոց... եւ սուտանուն Եսայի գրչի, որ անուամբս եմ կոչեցեալ եւ գործովս՝ ոչ, ընդ հովանեաւ սուրբ Սորանաչատայ Աստուածածնիս ի գաւառս Ջաղամ, ի դառն եւ անբարիշտ ժամանակիս, որոյ արդարութեան կողմն հակեալ էր եւ անիրաւութիւն եւ անկարգութիւնն ա-

<sup>5</sup> 1637ին Եսայի՝ Աստուածատուր քահանային համար ժողովածու մը կը գրէ՝ «ընդ հովանեաւ մեծայարկ գումրեթաձե Սորանաչատ սուրբ Աստուածածնիս եւ Վանական Վ. ի սուրբ գեղեցմանիս» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշ. էջմ. 2116, համտ. Կարենեան, Յուշ. հայ. Ջեռ. էջմ. Թ. 2085):

մենայն ուրեք զաւրացեալ եւ ուր ուրեք գտանէր ճշմարտութիւն վասն ծովացեալ մեղաց իմոց ի բազմանալ անաւրինացն եւ նուազել քրիստոնէիցն, ի թագաւորութեան Պարսից Շահ Սափո եւ Յունաց թագաւորութեան Սուլթան Մուրատա. ի թուականութիւն Հայոց Ռ եւ Զի ամի... Ժողովեցան զաւրքն Յունաց, գնացին ի վերայ Բաղդատա բերդին դէմ յանդիման, էառ զբերդն թօփիւ եւ զարբազանաւք եւ կոտորեաց զաւրս բերդին ժԲՌ զաւրքս Պարսից, որոց փրկեցցէ զմեզ Տէր Աստուած. ի Հայրապետութեան սուրբ Գանձատարայ Տեառն Գրիգորիսի. ի յաթոռակալութիւն սուրբ ուխտիս Խորանշատայ ի Տէր Բարսեղ արհեսպիսկոպոսի եւ ի Տէր Յոհաննէս արհեսպիսկոպոսի եւ այլ եղբարցս, որ աստ կան հաւաքեալ: Գարձեալ յիշեցէք զթում կրանաւորն, որ ստ(աց)աւ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոց եւ ծնողացն Ազին Գաւգալ աղին եւ եղբարցն Յատումին եւ Մէլիքին...: Գարձեալ յիշեցէք զթում կրանաւորն, որ փափականաւք զրել էտ զսուրբ Աւետարանս» (Արձագանք, 1888, էջ 133 եւ 163):

Յովհաննէս արքեպիսկոպոսը զեռ կը յիշուի 1668ին՝ «Փառք... արդարեալ զսա (Աւետարան) ի յերկիրս Թաւուշու ի գ(ե)աւղս Քաթալ կոչեցեալ ի դուռն սուրբ Աստուածածնիս ընդ հովանեաւ սուրբ Մանգոսիս ի թուին հայկազնիս ՌՃԺԷ ի հայրապետութեան տէր Պետրոսի ի յաթոռն Խորանշատու ի յաթոռակալն Յովհաննէս արհեսպիսկոպոսին» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 365. հմմտ. Կարենեան, Յուց. հայ. Չեռ. էջմ. 294): Յաջորդ տարին 1669ին «Գրիգոր վարդապետս, անարժանս Խորանշատու առաջնորդ էր, արքեպիսկոպոս» (Անդ, ի Հ. Պատուրեանէ): Բայց 1683ին կը յիշուի Ովանէս եպիսկոպոս Խորանշատու, որ Չորթթան գիւղի եկեղեցին կը շինէ (Արցախ, էջ 328):

Խորանշատի վանքը<sup>6</sup> ժամանակին շատ կալուածներ եւ հողեր ունեցած է, սակայն անոնց մեծ մասէն յետոյ զրկուած (Արցախ, էջ 324):

Ճամբորդի մը խօսքերով փակեք այս հոյակապ հաստատութեան պատմութիւնը՝

«Օրը տարածամուժ է, մենք չենք կամենում հեռանալ վանքից, այնքան հրապուրիչ է իւր գեղեցիկ դիրքով եւ կրօնական ջերմեռանդութիւն ազդով եւ վսեմաշուք տաճարով, վերջապէս իւր պատմական անցեալով... չէ՞ որ այս տեղ կացել են այնքան աստուածասէր եւ աղօթասէր կրօնաւորներ, այստեղ ուսել, դաստիարակուել են շատ աշակերտներ՝ խումբ խմբի, սերունդ սերնդի ետեւից եւ այդ բոլոր արդիւնաւոր անցեալից ի՞նչ է մնացել հայ ազգի սեպհականութիւն — լքուած, անտէր, անսպցելու մենաստան» (Արձագանք, 1888, էջ 88):

5. ԽՈՒՆԻՍԱՅ ՎԱՆՔԸ

Գետարակ վտակի ձախ ափին եւ Մօլլալու թրքարնակ գիւղի մերձ: Փոքրիկ վանք: Ունի կաթողիկէ եւ գեղեցիկ շինուածք: Անմարդարնակ (Արցախ, էջ 314. Ազգր. Հանդ. 1899, էջ 347. Հ. Ս. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 212):

6. ԽՐԹԻՆ ԱՆՊԱՍՏԸ

Գետարակ գիւղի մերձ: Թաւուտ անտառի մէջ: Ունէր հոյակապ եկեղեցի: Եղած է բնակավայր Յովհաննէս Մայրազոմեցիի<sup>7</sup> (Արձագանք, 1888, էջ 86. Ջալալեան, Ճամբ., Բ., էջ 360. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 31):

7. ԾԱՂԿՈՅ ՎԱՆՔԸ ԿԱՄ ԾԱՂԿՈՅԱՅ ԱՆՊԱՍՏԸ

Բարձրացած է Գառնակեր գիւղի մերձ Շամքոր գետակի ձախ ափին՝ Ժայռի մը զլիսուն: «Մենաստանս ոչ սիւներ ունի եւ ոչ կաթողիկէ, այլ ունի սովորականից շատ մեծ դուռն, բարձրագոյն շինուածք եւ նեղ նեղ լուսամուտներ» (Արցախ, էջ 316): Ունի քարաշէն գաւիթ մը: Խաչքարի մը վրայ գրուած է՝ «Տէր Ունան պարոն Գարրիէլին քաւարան, թվ. ՌՃԼԸ», իսկ ուրիշ Խաչքարի մը վրայ կայ՝ «ՁԻՅ» թուականը (Ազգր. Հանդ., 1899, Ե., էջ 343):

Ջալալեան այս մենաստանը կը նոյնացնէ Հրեշտակապետաց վանքի հետ (Ճամբ., Ա., էջ 162): Շինութեան տարին անձանօթ է: Գառնակերցիներու «Ասելով այս տաճարն

<sup>6</sup> Սոյն վանքի մասին հմմտ. գեռ Բիւզանդիոն, 1900, Թ. 1103, Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 312—313. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, էջ 202):

<sup>7</sup> Բարխուդարեան գիտէ՝ Ս. Սարգիս ուխտատեղի մը. «Այս տեղ բնակած է Յովհան Մայրազոմեցի գետնական վարդապետ» (Արցախ, էջ 313):

եղել է կուսանաց անապատ եւ Ծաղիկ մայրապետի անունով կոչուել է Ծաղկոցայ: Բայց եթէ արդարեւ կուսանաց մենաստան եղած լինի այս Ծաղիկ անունից Ծաղկոցայ կոչուել չէր կարող. դուցէ Ծաղկանոցի կրճատումն է Ծաղկոցը» (Արձագանք, 1886, էջ 308. հմմտ. Հ. Ս. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 466):

Յիշատակագրութեան մը մէջ նշանակուած է՝ «Փառք... արդ եղև աւարտ գրչուկութեան սորա ի գեղաքաղաք Եղիվարդ ի կաթողիկոսութեան Տեառն Գրիգորի ի թվ. Յայոց ԶԺԷ (1467) ի դանութեան ճհանշահին ի խնդրոյ Մատթէոս քահանայի...: Աղաչեմ յիշել զնկարող սորա զանարժան Ազարեայ կիրս Գանձակայ ի յաթոռս Գառնակերի ի դուռն Ծաղկոցի սուրբ Աստուածածնիս... ի կաթողիկոսութեան Տեառն Տէր Յովհաննիսի եւ տեղոյս աթոռակալութեան տէր Թարունի արքեպիսկոպոսի...: Յայտմ ամի թագաւորն Վրաց Կաւկի ձեռն... (չիք) ի Ղուրդաւորն վրաց Կաւկի ձեռն... (չիք) ի Ղուրդաւորն քաջոյն եւ թագաւորեցաւ Բաքրատ, զաւրոյ քաջոյն եւ թագաւորեցէ» (Հ. Ն. Ակիլգոր Տէր Աստուած զօրացուցէ» (Հ. Ն. Ակիլգոր նեան, Հաւաք. Յիշ. Չեռ. Տէր Աւետիսեանի Յուց. հայ. Չեռ. Նոր Զուգայի, Թ. 60):

8. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Կարմիր վանքը կամ Ղզըլ-բերիտա կանդնուած է Աղբերիսի հարաւային կողմը, Բանուած է Աղբերիսի հարաւային կողմը, Բարձր Ժայռի մը վրայ: Իսկական անունն՝ անձանօթ: Կարմիր վանք յորջորջուած է, վասն զի կարմիր քարերով շինուած է (Արցախ, էջ 312):

9. ՀԱՐԱՆՅ ՎԱՆՔԸ

Գառնակեր գիւղի մերձ: Աւերակ: Մօտերը կան վարդապետներու եւ միաբաններու գերեզմաններ (Արցախ, էջ 317):

10. Ս. ՀՈՒՄՍԻՄԵՒ ՎԱՆՔԸ

Բարսում գիւղի երկրորդ վանքն է: Ամբողջապէս քարուկիր: Բարխուդարեան կը գրէ՝ «Այս է Գօշ Միւրթարի ակնարկած Հոնիսիմէի մենաստան» (Արցախ, էջ 318—319): Համանուն վանք մըն ալ կայ Ալիզըրը գիւղի արեւմտեան կողմը: Շինուած է կոփածոյ քարերով (Մմբատեան, Գեղարքունիք, էջ 544):

11. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ՎԱՆՔԸ ԵՒ ԳԱ(Ռ)ՆԱԿԵՐՈՅ ՎԱՆՔ

Գառնակեր գիւղի մօտերն է Գարրիէլ եւ Միքայէլ Հրեշտակապետաց վանքը: Տաճարը ունի երկու փոքր եւ մէկ աւագ խորան, 11 մետր երկարութիւն եւ 8 մետր լայնութիւն: Գարուկիրով շինուած է գաւիթը, ուր ննջեցեալներ ամփոփուած են: Շիրիմուր նաքարի մը վրայ կարելի է կարդալ՝ «Այս է հանգիստ ճգնաւոր Յովհաննէս վարդապետի. շինող վանիս՝ Մաղաքի որդի, թվ. ՌՄ ՀԷ»: Ուրիշ արձանագրութիւն մըն ալ շինութեան մասին կ'արտայայտուի՝ «Շնորհին Աստուծոյ շինեցաւ սուրբ Միքայէլ եւ Գարրիէլս ծոյ շինեցաւ սուրբ Միքայէլ եւ Գարրիէլս ճոյ շինեցաւ Յովհաննէս վարդապետի եւ մահձեռամբ Յովհաննէս վարդապետի եւ մահձեռամբ Յովհաննէսի հանդերձ միաբան եղտեսի Յովհաննէսի» (Արցախ, էջ 316. Արձագանք թվ. ՌՄԿԵ» (Արցախ, էջ 308. Ջալալեան, Ճամբ., Բ., էջ 162. Ազգր. Հանդ., 1899, Ե., էջ 343. Հ. Ս. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 466. հմմտ. Ծաղկոցայ վանքը):

Միաբաններու համար շինուած են ինը սենեակ:

Վերոյիշեալ Յովհաննէս վարդապետ այս վանքին կամ հիմնադիրն է եւ կամ վերաշինողը:

Գուցէ այս եւ կամ Ծաղկոցայ վանքը ակնարկուած ըլլայ հետեւեալ յիշատակագրութեան մէջ՝ «Գրեցաւ (Աւետարանս)... սուրբ ուխտս ի Գանայեղոց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս (որ Գառնակերի եկեղեցին է)... ձեռամբ Իգնատիոսի» (Թօփեկեան, Յուց. հայ. Չեռ. Դաղ. Վ. Բ., էջ 46. հմմտ. եւ Արցախ, էջ 315):

12. ՂԱՐԱ-ՄՈՐԱՌԻ ԱՆՊԱՍՏԵՐԸ

Մեծ Ղարա-Մորառի մերձ վտակի մը քով կիսաւեր անապատ մը կայ: Իսկ գիւղին մէջ կայ կուսանաց անապատ մը, որուն փոքր եկեղեցւոյն դրան վրայ գրուած է՝ «Շնորհակեցեոյն դրան վրայ գրուած է՝ «Շնորհակեցեոյն եւ Ովանէս վարդապետս, հին Աստուծոյ եւ Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի գեղեցիկ (առաջապատ կուսանաց) արդեամբ գուիք (գոյլւք) ամենայն քրիստոնէից յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն աշխատողաց ի մայրապետութեան անապատիս թագուհւոյն եւ կայինային ի ՌՃԾ. թվ. (Արցախ, էջ 309 եւ Ազգր. Հանդ., 1899, Ե., էջ 326—327. հմմտ. Խամշի վանքը):

